ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/189

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Մասնակից՝ «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ա. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով գնանշման հարցում, ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11373-2020 գրությամբ «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 24.07.2020թ.-ի թիվ 04/31.2/19039-2020 գրության հիման վրա, 30.07.2020թ.-ին «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 30.07.2020թ.-ին:

30.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/189 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

06.08.2020թ.-ին և 12.08.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.08.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.08.2020թ.-ին:

2. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 24.07.2020թ.-ի թիվ 04/31.2/19039-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Նախարարության կողմից 2020 թվականի հուլիսի 22-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով կազմակերպված ընթացիկ նորոգման աշխատանքների գնման գործընթացին հայտ է ներկայացրել Սուրեն Մարտիրոսյան ԱՁ-ն, որը բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: 2020 թվականի հուլիսի 23-

ին Սուրեն Մարտիրոսյան ԱՁ-ի կողմից ստացվել է՝ իր կողմից ներկայացված գնման հայտը չդիտարկելու խնդրանքով գրություն»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11373-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 06.08.2020թ.-ին հրավիրված նիստին՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Ներկայացուցիչը բանավոր կերպով հայտնել է, որ չեն կարողացել ապահովել պայմանագրի կնքումը, քանի որ չեն իմացել, որ գնման ընթացակարգին մասնակցելու ժամանակ նյութածախսը պետք է կատարի մասնակիցը, այդ իսկ պատճառով ներկայացված գնային առաջարկում հաշվել, ուստի և ներկայացրել են միայն աշխատանքի կատարման գումարը:

4. <u>ՍՑ-LO-2020/189 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման

նպատակով 13.07.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետի համաձայն՝ «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

v. Նույն արձանագրության համաձայն՝ 24.07.2020թ.-ին կայացած նիստում արձանագրվել է, որ գնման ընթացակարգի բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից ստացվել է՝ իր կողմից ներկայացված գնման հայտը չդիտարկելու խնդրանքով դիմում:

vi. Մասնակիցը 23.07.2020թ.-ին Պատվիրատուի ուղղված գրությամբ խնդրել է «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ին կողմից ներկայացված հայտը չդիտարկել և ազատել սև ցուցակում ներառվելուց կամ այլ պատասխանատվության ենթարկվելուց, քանի որ նախահաշիվը կազմվել է առանց հաշվի առնելու նյութածախսը, այսինքն՝ գնային առաջարկը ներկայացվել է միայն աշխատանքի համար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11373-2020 գրությամբ «Սուրեն

Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.07.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 22.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետի համաձայն՝ «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ 24.07.2020թ.-ին կայացած նիստում արձանագրվել է, որ գնման ընթացակարգի բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից ստացվել է՝ իր կողմից ներկայացված գնման հայտը չդիտարկելու մասին դիմում, մասնավորապես, Մասնակիցը 23.07.2020թ.-ին Պատվիրատուի ուղղված գրությամբ խնդրել է «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ին կողմից ներկայացված հայտը չդիտարկել և ազատել սև ցուցակում ներառվելուց կամ այլ պատասխանատվության ենթարկվելուց, քանի որ նախահաշիվը կազմվել է առանց հաշվի առնելու նյութածախսը, այսինքն՝ գնային առաջարկը ներկայացվել է միայն աշխատանքի համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ն 23.07.2020թ.-ինՀանձնաժողովին ուղղված գրությամբ, խնդրելով չդիտարկել մասնակցի կողմից

ներկայացված հայտը, հրաժարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/110» ծածկագրով գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11373-2020 գրությամբ «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/189 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սուրեն Մարտիրոսյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**